ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Տիգրան Գաբրիելյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Թբիլիսի, Վրաստան 2019 թվականի հունիսի 26-28-ը
4.	Հրավիրող կողմը	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) վրաստանյան գրասենյակ
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական կենդանիների (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ) համարակալում և հաշվառում իրականացնելու նպատակով՝ փորձի փոխանակում, առկա խնդիրների բացահայտում, վրացական մոդելի տեղայնացման հնարավորություն, ինչպես նաև նոր կապերի ստեղծում:
6.	Քննարկված թեմաները	«Վրաստանում կենդանիների համարակալման, նույնականացման և հետագծելիության ապահովման ազգային համակարգի (ԿՆՀԱՀ)», ստանդարտ օպերացիոն ընթացակարգերի, համարակալման ծրագրի և ռազմավարության, մշակված փաստաթղթերի, գործընթացների, կենդանիներին տրամադրվող անձնագրերի, տեղեկատվության հավաքագրման և համակարգչային համակարգի (software) մուտքագրման մեխանիզմների վերաբերյալ,
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Համաժողովի ընթացքում քննարկվել է կենդանիների նույնականացում և հետագծելիության ապահովման մեխանիզմի վերաբերյալ հարցեր (Զվիադ Ասանիշավիլի - Կենդանիների նույնականացման և գրանցման բաժնի պետ, Դրագան Անգելովսկի – ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչ, Միխելի Սոխադզե - Վրաստանում Կենդանիների նույնականացման և հետագծելիության ազգային համակարգի ազգային թիմի ղեկավար, Նինո Տոպուրիդզե- Վրաստանում Կենդանիների նույնականացման և հետագծելիության ազգային համակարգի կապերի ապահովման խորհրդատու):

8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց «Վրաստանում կենդանիների նույնականացման և հետագծելիության ապահովման ազգային համակարգի (ԿՆՀԱՀ)», ստանդարտ օպերացիոն ընթացակարգերի, համարակալման ծրագրի(software) և ռազմավարության հայկական կողմին անհատույց տրամադրման վերաբերյալ: Բացի այդ, ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ ս/թ նոյեմբերին Հայաստանի Հանրապետություն Վրաստանի անասնաբուժական տեսչության ղեկավարի այցի ընթացքում կներկայացվի «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի իրականացման ընթացակարգը և մեխանիզմները: Հանդիպման ընթացքում երկկողմ փաստաթղթեր չեն ստորագրվել:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատարի 2019 թվականի ապրիլի 11-ի N 85-Ա հրամանով ստեղված՝ «Հայաստանի Հանրապետության խոշոր եղջերավոր կենդանիների հաշվառման և համարակալման ծրագրի» մշակման նպատակով աշխատանքային խմբի գործունեության ապահովում: Պատասխանատու՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:
10.	Գործուղվողները	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	02.07.2019թ.